

կաշրջանին ասեն: Արի՛հ Խոյի մօտ այս շարքին մինչև անգամ երկու անհամարութիւններ (Discordanz) նկատած է: Այս տարիքն ունեցող խաւեր լայն դուռով մը տարածուած են Հարաւային եւ Հիւսիսային Հայաստանի մէջ, Հարաւակողմը՝ «զաճաբեր շարքը» (մասամբ Սակաւարդեակ) ավանաճիւր մը կը կազմէ Զաղրոսի եւ Տաւրոսի ստորտը. Հիւսիսակողմը՝ Սարմատական աստիճանը կը տարածուի Հիւսիսային եզրալեռներէն մինչև Կաւկաս եւ Սեւ ծովէն մինչև Կասպից ծով: Մինչդեռ իւր խաւերը Կաւկասի հարաւային դարին վրայ դէպ ի հարաւ ծալած նստած են, զիմացը Թրիպլիթական շրջանին մէջ դէպ ի հիւսիս ծալիծարուած են<sup>41</sup>: Ասոնց միջեւ Մեսիական Հասարանին մէջ խաւերը կեցած են հորիզոնական եւ անխախտ:

Այս ժամանակաշրջանէն ետքը Հայաստանի մէջ նոր ծալում մը տեղի ունեցած է: Մարազայի եւ Աղեքսանդրոպոլի (Լեւինական) (եւ Թերեւս նաև Զոխի) Միջին-Բազմարդեակային լճական փխարները՝ Ողնայարաւորաց իրենց հետաքրքրական կենդանախմբով՝ հորիզոնական նստած են: Երկրին անընդհատ վերամուղ բարձրացումն ի վերջոյ հայկական բարձրաշխարհաց սարահարթային նկարագիր տուած է, եւ ասոր զուգընթաց էին մեծ հողաբաժիններու խորտակումն, բարձրացումն ու խորասուզումը: Այս երեւոյթը սխաճ էր Ներքին-Բազմարդեակի աստեղ: Եւ թէ նոյնը տակաւին չէ վերջացած՝ կապացուցանեն Փոսահողերու մէջ տեղի ունեցող սաստիկ երկրաշարժները<sup>42, 103</sup>:

Յոլովարդեակի ծովալճային սկախաւերը շատ տարածուած են Կենդրոնական Սարահարթին վրայ: Ուլի-Նիլ Բալ-Յի-Բալ (Dreissensia polymorpha) քարացածին պատեանները յաճախ խաւեր կը կազմեն: Նաեւ այս կրտսերագոյն կազմութիւնները ծալում մը չեն ցուցնիր. այլ կամ հորիզոնական նստած են, կամ 2—3<sup>0</sup> հակած:

Ասոնք մեծ չափով ծածկուած են ընդարձակածաւալ հրաբխոյ ծածկոյթներով, որոնք կամ ձեղքերէն դուրս բղխած են եւ կամ հոսած ծաւալած են հսկայ հրաբուզիներէն (Արարատ, Արագած, Միփան, Միմրուտ, Սամնար եւն) եւ աւելի փոքր՝ տողանաձեւ շարուած կոնալեռներէն (Սողանլու, Լ'յաճա եւն): Տակաւին այսօր մնացած մեծ լճերուն մէկ մասն աղի է (Վանայ ծով, Խոզապինի լիճ եւն), միւս մասը՝ անոյշ ջրոյ (Սեւանայ, Զաղարլի լիճ եւն). բայց ասոնց եւ ոչ մէկն Ուլի-Նիլ Բալ-Յի-Բալ (Dreissensia polymorpha) ունի. որով կը հետեւի թէ բնագիտական պայմաններուն մէջ փոփոխութիւն տեղի ունեցած է: Ինչպէս արդէն յիշեցինք՝ հրաբուզային վերջին հրաշնութիւնը (Նիւլ-րուա լեռան) տեղի ունեցած է 1441ին: Թոնարիկ այսօր ալ զեռ. ծծմբահան (Solfatare) գործունէութիւն ունի:

Արդէն յիշեցինք Սառնաշրջանի (Սառուցի ժամանակ) խառագոյն կլիման: Նորաքարային (neolitisch) քաղաքակրթական արտադրութիւններէն գտնուած են Կայծքարէ քերոց մը՝ Չոլարուր (Tschalabur) գետոյն ափը՝ Կուիրիլայի մօտ. — Վանակասե (Obsidian) գործիքներու գործարան մը ծալայի մօտ՝ Տփղիսի մօտերը. — կանաչ ծիրանաքարէ յղուած տապար մը Նախիջևանի աղահանքներուն մէջ. — ցցասներ (Pfahlbauten, լճարնակաց ձողաշէն տներ) Խոզապին լճի ափը, եւն: Պղնձադարեան մնացորդներ գտած է Դր Մորգան<sup>72</sup> Սամխէթի մէջ:

(Շարունակելի.)

Հ. Թ. Տ.



**ՆԵՐՈՆ ԿԱՅՍԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԵ-ԿԱՆՈՒԹԻՒՆԸ**

**ԳՐ. ՎԵՐՆԵՐ ՀՈՒՐ**

(Շարունակելի.)

2. Պարբեական պատերազմի մարտադադարի շրջանը:

Վերջին բանակցութիւններու (57/58ի ձմեռը) ի դերեւ ելլելէն եւ վիճական երկրին 58ի ամառը գէնքի ուժով գրաւուէն ետքը, ի սկզբան Հայաստանի նկատմամբ միմիայն հռոմէական քաղաքականութիւն մը հնարաւոր էր, այսինքն վերադարձ դէպի Աւգոստոսի ուղղութիւնը, որ Հռոմի կողմանէ նշանակուած հելլենական գոյնով իշխանաւորի մը միջոցով երկրին տիրապետութիւնը ապահովել կը ջանար: Ըստ այսմ ալ կայսրը 59ի դարնան անտիրական գահը՝ յանձնեց Հերովդեանց Կապադոկիական գծէն իշխանի մը, որուն տրուեցաւ՝ հայ արքայիկ մեծախառ՝ Տիգրան անունը: Տրգատի վերջին յարձակումն ետ մղելէ յետոյ Կորբուզն նոր արքան իր գահը բարձրացուց<sup>39</sup>:

Արեւելեան սահմանին պաշտպանութեան նոր գրութիւնը երեք աստիճանի կը բաժնուէր: Առաջադիր եւ վտանգուած պարտաւոր էր կազմէր Հայաստանի թագաւորն որուն տրուած էր հռոմէական օգնական զուեղ մը. պաշտպանողական երկրորդ գօտին կը շրջադուէր վրաստանէ մինչև Կոմագենէ հռոմէական հին հողին վրայ հաստատուած հպատակ պետութիւններէ, որոնք այն միջոցին Հայաստանի կեցած ընդարձակուեցան. ասոնց թիկունքը կեցին արեւելեան բանակին հինգ լեգէոնները՝ այժմ միասնաբար ենթարկուած Կորբուզոնի վերին հրամանատարութեան, որ Դուրմիսս Կուադրատոսի անշուշտ նախորդ տարին տեղի ունեցած մահէն ետքը՝ Ասորիքի վարչութիւնն ալ իր ձեռքն ունէր եւ հիմայ կերչուցէս ալ Հռոմէական Արեւելքի առաջին նահանգին կուսակալ կը կարգուէր<sup>40</sup>:

Հայաստանի ժողովրդեան մէջ տիրող տրամադրութեան եւ Արշակունի գահի-հետամուտին, որ երկարատեւ իշխանութեամբ

ժողովրդեան սէրը եւ վստահութիւնը շահած էր<sup>41</sup>. մշտատեւ մօտաւորութեան պատճառով, նոր թագաւորին դիրքը կարելի էր պահուիլ միմիայն բաւականաչափ ուժեղ հռոմէական զուեղ մը օգնական տարով անոր: Այս պատճառով Կորբուզոն իր պաշտպանութիւն թողուց 1000 լեգէոնական<sup>42</sup>, երեք օժանդակ զուեղ եւ 2 գումարտակ դաշնակցային այրուծի, ուրեմն ընդ ամէնը 3000 հռոմէական կիրթ զինուոր: Իր գնահատուած մօլը այս բանակը բաւական ուժեղ էր գահը ներքին խռովութիւններու դէմ ապահովելու եւ պարթեական արշաւի մը պարագային՝ թագաւորին նախնական զօրավիզը դառնալու:

Հռոմէական բանակին այս առաջադասին ետեւը, որ իրանեան մշակոյթի հողին սահմանին կեց հաստատուած էր, եւ որուն առաջնորդն էր Հայաստանի թագաւորը, ընդարձակ կիսաշրջանակի մը վրայ կը զբաղուէր վերը յիշուած Հռոմի հպատակ տնտեսութիւններու խումբը, որոնք իրենց արտադրութեան խումբը հելլենական մշակոյթովը սակել կամ նուազ հելլենական մշակոյթեան հռոմէական պետութեան հաւատարմութեան լաւագոյն գրաւական մը կը ներկայացնէին, լաւագոյն գրաւական մը կը ներկայացնէին, Սամոսսէ մինչև Եփրատ կը տարածուէր Կոմագենէի թագաւորութիւնը, որուն մայրաքաղաքին՝ Սամոսատի մօտ, Եգեոսիա տաճարը կը կարէր: Որովհետեւ նոյ ճամբան գետը կը կարէր: Որովհետեւ պետութեան անմիջական երկիրը Կոմագենէի հիւսիսէն սահմանակից Մելիտինէ նահանգին մէջ մինչև գետը կը յառաջանար, հանդին մէջ մինչև գետը կը յառաջանար, անոր համար ալ ճիշդ հոս՝ երկու աղբերաններու խառնուեցին մօտ 54ին ստեղծուած թագաւորութիւնը մինչև գետին Ծովքի թագաւորութիւնը մինչև գետին եւ արեւելեան եզրերը ընդարձակուած էր. եւ իր մէջը կը պարփակէր Արաճանոյ ստորին հոսանքին լայնատարած հովտը Տաւրոսին մինչև Անախուարոս<sup>43</sup>. հոս կը թագաւորէր ասորի Սոյեմոս Եմեսացին:

Հիւսիսէն Մելիտինէի կը միանար նոյնպէս 54ին կազմուած Փոքր Հայքի թագաւորութիւնը: Հայաստանի հիւսիսային սահմանին եւ Սեւ Ծովու, Արեւի եւ վրական սահմանին միջեւ տարածուող երկիրը 37էն սկսած իբրեւ Պոնտական թագաւորութիւն

<sup>39</sup> Տակիտ. Տ. Ժ. 26, ուր կարելի է գտնել նոր կարգադրութիւնը ամբողջութեամբ: Ժամանակակից կարգադրութեան մասին հմտ. Klio Ժ. 6:  
<sup>40</sup> Արդէն 58ի տշնան վեհանեանի գեղարարական պատկերացումները կը նշանակէ, որոնք մինչև Պարսից ծովը պիտի ընկերանային անոնց:

<sup>41</sup> Տրգատ անունով Ալաններու յաղթող, կ'այլի հայ ժողովրդական երգերու մէջ, որոնք պատգամարձուած են Մ. Մորենայիէն: Տես Մարկուարտ ZDMG. 49, 639:  
<sup>42</sup> Նոյն կերպ կարգադրութիւն կազմ էր 3ին Բուսպրական պետութեան համար. տես վարը Գլ. Բ. 104. 4:  
<sup>43</sup> Տես Լ. Հաուպարտ Armenien 511 յ. 1:



Թեաներու հետ բուռն կռուի մէջ էր, իսկ արեւելքի մէջ իր դաւաններէն մին միւսին ետեւէն կը կորսնցնէր, որոնք հնդկապարթեալական պետութենէ առաջ եկած Արիա (Aria) իշխանութեան ձեռքը կ'անցնէին: Ի վերջոյ իրեն ձեռքը մնացին միայն Կասպից ծովու եզրագլուխները եւ էլբրուզէ հարաւ՝ պարթեալ բարձրագուտին այն երկրամասը, որ սահմանակից է անոնց, այնպէս որ կարծես միայն ժամանակի խնդիր էր, որ նորակազմ պետութիւնն իր երկու հզօր զբաղիւններէն միւրուն:

Այս պարագաներուն մէջ 61 տարուայ խաղաղութեան կնքումը, որով վրկանեան պետութիւնը պարթեալներէն կը ճանչուէր, բոլորովին անյուսալի բարեբախտութիւն մըն էր: Վաղարշ այս ծանրակշիռ դիմումն բրաւ, վասն զի Հայոց Տիգրան թագաւորին 60ին Ատրպատական մտնելուն մէջ կը տեսնէր նախակարգապետը հռոմէական յարձակողականի մը, եւ կ'ուզէր հռոմէական պատերազմին ուրիշ կողմանէ ազատ ըլլալ: Ուրեմն Հայաստանի համար մենամարտը՝ վրկան պետութեան ազատարարը եղած է եւ արեւմտեան սահմանին վրայ տիրող խաղաղութիւնը՝ ոյժ տուած է անոր կորսուած արեւելեան նահանգներն եւ գրաւելու 55:

Այս յարաբերութիւնները սակայն մեր առջեւ կը դնեն այն հարցը, թէ արդեօք ինչ էր ուղղութիւնը եւ նպատակը հռոմէական քաղաքականութեան, որ ճիշդ այս միջոցին արեւելքի մէջ իշխող մարտադպարին վերջ դրած է: Մինչեւ հիմայ այնպէս համարուած է, թէ Տիգրանի Ատրպատական յարձակիլը ինքնակամ քայլ մը եղած է, որ հռոմէական պետութիւնը հակառակ կառավարութեան կամքին անկշտելի բարդութիւններու մէջ զահալիթած է. այս տեսակէտին ապացոյցը դոնել կարծուած է ցայժմ Տիգրանի դահալիթութեան մէջ 56: Սակայն այս տեսութիւնն իր մէջ անհաւանականութեան որոշ տարրեր կը կրէ. ներսնեան արեւելեան քաղաքականութեան վրայ մեր նոր համապատկերը սակայն բոլորովին ուրիշ տեսակէտներ ընդունելի կ'երեւցնէ:

Հայաստանի թագաւորը Հռոմի աւատու մըն էր, որ իր գծուարին կացութիւնը միայն հռոմէական հզօր գունդերու

դէնքերովը կրնար հաստատուն պահել. երկրին իրական տէրը հռոմէական բանակներուն հրամանատարն էր, որ վրացի Միհրդատի ժամանակն իսկ որոշիչ դերակատարն էր 57: Եթէ արդէն այն միջոցին գաշակից բանակին առաջնորդը թագաւորին վրայ կ'ըլլէր, ապա ուրեմն հռոմէական հրամանատարին դիրքը լեզէնդաններու Հայաստանի փոխադրուելէն յետոյ շատ աւելի ուժեղացած պէտք է ըլլայ. ասոր օրինակն ունինք Բոսպորի պետութեան մէջ 58: Տիգրան չէր կրնար առանց հրամանատարին գիտութեան սկիզբ ընել որ եւ իցէ մարտական ձեռնարկութեան մը եւ այս անկարելի էր ի մասնաւորի մեծ արքային մէկ աւատուունի դէմ: Իսկ հրամանատարն իր կարգին, այսպիսի կարեւոր խնդրոյ մը մէջ առանց իրմէ վերադրոյնին՝ Ասորիքի փոխարքային՝ հաւանութեան չի կրնար դործած ըլլալ. ուրեմն կու գանք այն եզրակացութեան թէ դէպի Ատրպատական յարձակումը Կորբուզոնի կամքովը եւ գիտութեամբը կատարուած է: Այս եզրակացութիւնը այն ատեն միայն կարելի է ուժաբեկ ընել, երբ հնարաւոր գտնայ ցուցնել, թէ այն նոր բարդութիւնը վարիչներու ծրագիրները խանդարած է:

Իմ տեսութեանս հակառակ միակ ապացոյցը կրնայ տալ, այն ենթադրական հին վարկածը, թէ Հռոմ այն համոզումն ունէր որ Հայաստանի գրաւումը եւ Տիգրանի գաղութիւնը բաղձալի ու տեւական վիճակը ստեղծած է: Այս տեսութեամբ՝ Ատրպատական յարձակելով պարթեալական պատերազմին զրգապատճառը կ'ըլլայ բնականաբար անխորհուրդ աւատուունի աններելի ինքնազուլուի մէկ դործը. սակայն կարծեմ ճիշդ այս ենթադրութիւնը վերը 59 ուժաթափ բրած եմ: 59 տարուայ կարգադրութիւնը ժամանակաւոր էր միայն. որ զրացի պետութեան հետ նոր հաշուեյարդարով մը վերջնականի պիտի վերածուէր. իրողութիւններու այնպիսի վիճակ մը գրուած էր, որ հանգիստ կարելի էր սպասել հաշուեյարդարի ժամանակին եւ եթէ հարկ սնունդէր այդ ժամանակն անձամբ որոշել:

57 Այս իրողութիւնը ամէնէն աւելի պարծապ կ'երեւայ Միհրդատի անկումին դէպքին, որ բաւական չէր հրամանատար, կաշառարեկ Կելս Պոլլիոնի մասնութեամբ կործանեցաւ: Տակիտ. Տ. ԺԲ, 45 ջջ. 58 Տես վարը Գլ. Բ, յոգ. 4: 59 Տես վերը յոգ. 2:

55 Տակիտ. Տ. ԺԵ. 2: 56 Հռոմ. Պատմ. Ե. 388, Հինգրոսըն, Ներսն 182 յջ.:

Եթէ այս տեսակէտէն դիտենք, բոլորովին ուրիշ կերպարանք կը ստանայ դէպի Ատրպատական յարձակումը, այն տղաւորութիւնը կ'ունենանք, թէ Տիգրան պարթեալական պատերազմին առիթ տուած է, վասն զի Կորբուզոն վայրկեանը եկած կը համարէր: Եւ իմ կարծիքովս, կրնանք գտնել նաեւ այն պատճառները, որոնք Կորբուզոնը պարթեալական մարտին վերաբարձարծումին զրգամ են: Վրկան գաշակիցներու սպաննացող պարտութիւնը պարթեալ հակառակորդին նշանակելի ուժեղացում մը կը խոստանար եւ միանգամայն ծանրապէս ինքրական կը դարձնէր պարթեալ պետութեան բաժանումին վրայ հաստատուած տիրութեան բաժանումին վրայ հաստատուած տիրապետութեան ծրագիրները: Հայաստանի համար մենամարտը պատահաբար չէ որ վրկանեան պետութեան ազատութիւնը բերած է, այլ Հռոմ դիւմամբ ձեռնարկած է անոր, որպէս զի վրկաններու վերստին պարթեալ պետութեան իշխանութեան ենթարկուելն արդէն է:

Եւ թէ այս քաղաքականութեան թեւերը, ոչ թէ մինչեւ Կորբուզոն, այլ մինչեւ շատ աւելի բարձր շրջանակներ կը հասնին, կը տեսնուի զարձեւալ արեւելքի դէպքերուն բրիտանական իրադարձութիւններու վրայ առաջ բերած ազդեցութենէն: Յուլիոս Կլաւդիոսն ապա զործակատարը, որուն կայսրը պաշտօն տուած էր Սուեանիոսը չափաւոր Եւ հանգալա քաղաքականութեան մը յորդորելու, արդէն 60 տարուայ աշնան Բրիտանիա հասած էր:

Ուրեմն Հռոմի մէջ Տիգրանի յարձակողականէն քանի մը շարաթ վերջը արդէն կը կանխատեսէին թէ պարթեալական մարտը 61 տարուայ գարնան պիտի սկսէր: Այսպէս ուրեմն ո'չ թէ անխոհեմ աւատուունի անժամանակ մէկ արարքը, այլ իմաստուն կառավարութեան մը հեռատես հաշիւները պարթեալական նոր պատերազմի մը սկիզբը տուած են:

(Շարունակելի):



**ՅՈՒՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՏԵՐ ՄԱՐՈՒԿԵԱՆ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ**

Տասնեկներորդ դարի առաջին կեսում էջմիածնի հողեւորականութեան շարքերում առանձին սեղ է գրաւում Յովսէփ վարդապետ Վեհապետեանը. նա խոշոր վարդապետ Վեհապետեանը. նա խոշոր Աշտարակեցու Թիֆլիզի առաջնորդ եղած ժամանակ. այդ դերը զգալի դարձաւ մանաւանդ այն ժամանակ, երբ Ներսէս հեռանալով Թիֆլիզից՝ Յովսէփին թողեց էջմիածնում արտակարգ լիազօրութիւններով: Սրան է ուղղուած առաջինը Սաշատուր Արուստանի չորս նամակներէց, որոնք հրատարակուեցին «Հանդէս Ամսօրեայ»ում:

Յովսէփ վարդապետը սկզբում Տէր Մարտիրոսեան էր գրում եւ բնիկ Կարբեցի էր. Տէր Մարտիրոսը նրա հայրն էր, ժամանակի քահանայներից մէկը, որին Ս. Արուստանի քահանայներից մէկը, որին Ս. Արուստանի հանդէս է բերում «Վէրք Հայաստանի» մէջ Աղասու թագման ողբերգական տանի» մէջ Աղասու թագման ողբերգական էր պէտքերի լոյսից զրկուած եւ անդամալոյժ դարձած Մուսէն գալիս է եւ ընկնում նրա ոտները: Քահանայն ողորմութիւն է տալիս նրան, բայց յետոյ դիմի ընկնելով, որ նա անօրէնները գոհն է վրդովում է եւ անէծք կարգում նրան անբախտացնողներին:

Յովսէփ վարդապետն աչքի էր ընկնում իր արտասովոր եռանդով ու կամքի ուժով, որ չէր կարող վրիպել Ներսէս Աշտարակեցու արծուի հայեացքից. եւ նա Տէր Մարտիրոսեանին մօտեցրեց իրեն: Շուտով մենք տեսնում ենք, որ Յովսէփ վարդապետը այնպիսի ծառայութիւններ է ցոյց տուել տէրութեան ուսուցարանական պատերազմի ժամանակ, որ արժանացել է Ս. Աննայի Գ. աստիճանի շքանշանի, որ խիստ հազուատես երեւոյթ էր այն ժամանակները: Այդ մասին 1828 թ. Նոյեմբերի 22ին նրան գրուեց առանձին կայսերական հրաման հետեւալ օրինակով.

Ողորմութեամբ Աստուծոյ Մեք Նիկողայոս Առաջին Կայսր եւ ինքնակալ ամենայն ուսուց եւ այլոց եւ այլոց:

Յովսէփայ վարդապետի Հայոց. Ի վարձատրութիւն ծառայութեանցն զորս ցուցիք դուք յանցեալ պատերազմին